ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՐԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կարենիս համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Կարենիս, , Karenis.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 79-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

«Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարմանա նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի N 12-Ն հրամանի N 2 հավելվածի , 2006 թվականի սեպտեմբերի 11-ի N 15-Ն հրամանի հավելվածի դրույթներով, որոշում եմ.

1. 2017 թվականի հոկտեմբերի 06-ին ժամը 11^{00}-ին նշանակել Կարենիսի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի(ծածկագիր 1.2-1) ատեստավորում:
2. Ատեստավորման հանձնաժողովի աշխատանքների տեխնիկական սպասարկման լիազորությունները դնել առաջատար մասնագետ հաշվապահ Նվեր Վաչագանի Ալեքսանյանի վրա:
3. Ատեստավորման նախապատրաստական աշխատանքների իրականացման պատասխանատվությունը դնել աշխատակազմի քարտուղարի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

2017 թսեպտեմբերի 13
գ.Կարենիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՐԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կարենիս համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Կարենիս, , Karenis.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 80-Ա

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան՝ որոշում եմ.

1. 2017 թվականի սեպտեմբերի 20-ին հրավիրել Կարենիս գյուղական համայնքի ավագանու թիվ 10 արտահերթ նիստ հետևյալ օրակարգով.

1)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կարենիս համայնքի ավագանու 2016թվականի դեկտեմբերի 20-ի N-40-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

2) Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը մրցույթով վարձակալության տրամադրելու մասին:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

2017 թ. սեպտեմբերի 15
գ.Կարենիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՐԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կարենիս համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Կարենիս, , Karenis.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 81-Ա

ԿԱՐԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 144-րդ հոդվածի 3-րդ մասի, որոշում եմ

1. 2017 թվականինոյեմբերի 5-ին կայանալիք տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունները պատշաճ անցկացնելու համար քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր փակցնելու համար առանձնացնել հետևյալ անվճար տեղերը՝

1) Կոտայքի մարզ, գյուղ Կարենիս «Գյուղ Մուշի» փողոցի թիվ 25 հասցեի հարակից տարածք, 10 քմ,
2) Կոտայքի մարզ, գյուղ Կարենիս «Գյուղ Մուշի» փողոցի թիվ 32 (խանութի տարածք), 5 քմ.
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը դրվում է համայնքի ղեկավարի տեղակալի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

20 17թ.սեպտեմբերի18
գ.Կարենիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՐԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կարենիս համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Կարենիս, , Karenis.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 82-Ա

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի , հիմք ընդունելով տեղական ինքնակառավարման մարմինների 2017 թվականի նոյեմբերի 5-ին կայանալիք ընտրությունների նախապատրաստման և անցկացման ժամանակացույցը [illegible]ում եմ՝

1. Սահմանել մեկ տեղամասային կենտրոն Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կարենիս համայնքի միջնակարգ դպրոցի շենքում՝հասցեն գ. Կարենիս Գյուղ Մուշի փողոց N 30:

2. Օրենքով սահմանված ժամկետում տեղեկացնել լիազոր մարմին , տարածքային ընտրական հանձնաժողով և դպրոցի տնօրենին :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

2017 թ. սեպտեմբերի 19
գ.Կարենիս